ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպանդարյանի 1

N 834-Ա « 10 » մարտի 2025 թ.

ՀԱՅ ՄԵԾԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՍՏԵՂԾԱՐԱՐԱԿԱՆ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով և 50-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1043-1047 հոդվածներով, հայ մեծանուն մշակութային գործիչների հոբելյաններին նվիրված միջոցառումների շրջանակում.

1. Հայտարարել ստեղծարարական բաց հրապարակային մրցույթ՝ հայ մեծանուն մշակութային գործիչների հոբելյանների շրջանակում ստեղծարարական ծրագրեր և միջոցառումներ իրականացնելու նպատակով:

2. Հաստատել մրցույթի կազմակերպման կանոնակարգը՝ համաձայն հ.1 հավելվածի:

3. Հաստատել մրցույթի հայտարարման բովանդակությունը՝ համաձայն հ.2 հավելվածի:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանի վրա:

5. Որոշման կատարման նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված հ.1
Երևանի քաղաքապետի
10.03.2025թ.
N 834-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայ մեծանուն մշակութային գործիչների հոբելյաններին նվիրված միջոցառումների շրջանակում Երևանի քաղաքապետարանը հայտարարում է ստեղծարարական ծրագրերի իրականացման մրցույթ:
2. Մրցույթի իրականացման նպատակն է անվանի հոբելյարների և վերջիններիս ստեղծագործական ժառանգության հանրայնացումը, մշակութային կյանքի ակտիվացման գործում մասնակցության ապահովումը, ինչպես նաև մշակույթի ոլորտում արժեքների ստեղծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացումը:

2. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Մրցույթին կարող են մասնակցել ինչպես ՀՀ քաղաքացիություն ունեցող ցանկացած ոք, այնպես էլ կազմակերպություններ, ինչպիսիք են՝ հասարակական կազմակերպությունները, մշակութային հիմնադրամները, ՊՈԱԿ-ները, ՀՈԱԿ-ները և այլն:
4. Առաջարկվելիք ծրագիրը/միջոցառումը պետք է իրականացվի Երևանում և մեկնարկի մինչև 2025թ. դեկտեմբերի 1-ը:
5. Ներկայացվող հայտերը պետք է ուղարկվեն՝ համաձայն կից հայտաձևի: Նույն անհատը/կազմակերպությունը կարող է ներկայացնել առավելագույնը մեկ հայտ:
6. Հայտերը պետք է ներառեն ծրագրի/միջոցառման իրականացման նախահաշիվը էքսել տարբերակով, ծրագրի/միջոցառման բովանդակությունը՝ համաձայն ներկայացված հայտաձևի:
7. Առաջարկվելիք ծրագիրը կարող է վերաբերել ինչպես հոբելյարներից մեկին, այնպես էլ մի քանիսին:
8. Հայտերը պետք է ուղարկվեն mshakuyt.dramashnorh@yerevan.am և info@yerevan.am էլեկտրոնային հասցեներին՝ մինչև 2025թ. մարտի 31-ը ներառյալ (երևանյան ժամանակով մինչև 23:59-ը): Վերջնաժամկետից ուշ ուղարկված հայտերը չեն դիտարկվի: «Թեմա» հատվածում անհրաժեշտ է նշել՝ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐ:
9. Մրցույթն անցկացվում է մեկ փուլով:

10. Մրցույթին ներկայացված ծրագրերը նախկինում չպետք է իրականացված կամ այլ մրցույթին ներկայացված լինի:
11. Սույն կանոնակարգով սահմանված պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են, որի մասին հայտատուին տրվում է ծանուցում՝ հայտը ներկայացնելուց հետո, 10-օրյա ժամկետում:
12. Մասնակիցը մինչ հայտը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը:

3. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

13. Մրցույթի հաղթող ստեղծագործությունն ընտրվում է մրցութային հանձնաժողովի կողմից, որի աշխատանքային կանոնակարգը, ինչպես նաև անհատական կազմը սահմանվում է մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո, 7-օրյա ժամկետում:
14. Հայտերը գնահատվում են ըստ ներկայացված սանդղակի:
15. Մրցութային հանձնաժողովի կողմից հաղթող ճանաչված հայտատուի հետ սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ քննարկումների արդյունքում վերջնականացված ՀՀ դրամի չափով (ներառյալ օրենսդրությամբ նախատեսված հարկերն ու տուրքերը):
16. Մրցութային հանձնաժողովը կարող է ներկայացված որևէ հայտ հաղթող չճանաչել:
17. Մրցույթը կարող է չեղարկվել, եթե պարզվի, որ ներկայացված բոլոր հայտերը չեն համապատասխանում սույն կանոնակարգով հաստատված մասնակցության պայմաններին:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

18. Պատասխանատու ստորաբաժանումը սույն որոշման ընդունումից հետո, 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում www.yerevan.am կայքում և այլ միջոցներով իրականացնում է Մրցույթի վերաբերյալ հրապարակային ծանուցում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված հ.2
Երևանի քաղաքապետի
10.03.2025թ.
N 834 -Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ՝ ՀԱՅ ՄԵԾԱՆՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՏԵՂԾԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Ընդհանուր տեղեկություն.

Հայ մեծանուն մշակութային գործիչների (ցանկը՝ ստորև) հոբելյանների առթիվ Երևանի քաղաքապետարանը հայտարարում է ստեղծարարական ծրագրերի ներկայացման և իրականացման մրցույթ, որը, նպատակ ունենալով արժևորելու և հանրայնացնելու արվեստագետների ստեղծագործական ժառանգությունը, միտված է Երևան քաղաքի մշակութային կյանքի աշխուժացմանը, նորարարական և ստեղծարար ծրագրերի խթանմանը, մայրաքաղաքում մեծանուն արվեստագետների և վերջիններիս հավիտենարժեք ստեղծագործությունների ներկայությունն ավելի արտահայտված դարձնելուն:

Հայտերը պետք է համապատասխանեն ստորև ներկայացված պայմաններին, համարժեք լինեն ծրագրի նպատակին, միաժամանակ՝ հայտատուները կունենան ստեղծագործական ազատություն՝ կաղապարված չլինելով ծրագրի/միջոցառման կոնկրետ շրջանակով: Հայտերը կարող են վերաբերել ինչպես բացառապես մշակութային բաղադրիչ ներառող ծրագրերին՝ փառատոնների, բեմադրությունների կամ համերգային ծրագրերի կազմակերպմանը, այնպես էլ՝ նորարարական մոտեցումներ ենթադրող զանազան ծրագրերին: Ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է 30 միլիոն ՀՀ դրամ:

Ցանկ.

Գրականություն - Աղասի Այվազյան, Ինտրա (Տիրան Չրաքյան), Հրանտ Մաթևոսյան
*<u>*Ավետիք Իսահակյան - Այս ծրագրում ներառված չէ: Հայտատուները կարող են դիտարկել հետևյալ դրամաշնորհային ծրագիրը</u>*
Երաժշտություն - Հայրիկ Մուրադյան, Օֆելյա Համբարձումյան
Ֆիլմարվեստ - Հենրիկ Մալյան

Մրցութային պայմաններ.

- Մրցույթին կարող են մասնակցել ինչպես ՀՀ քաղաքացիություն ունեցող ցանկացած ոք, այնպես էլ կազմակերպություններ, ինչպիսիք են՝ հասարակական կազմակերպությունները, մշակութային հիմնադրամները, ՊՈԱԿ-ները, ՀՈԱԿ-ները և այլն:
- Առաջարկվելիք ծրագիրը/միջոցառումը պետք է իրականացվի Երևանում և մեկնարկի մինչև 2025թ. դեկտեմբերի 1-ը:
- Ներկայացվող հայտերը պետք է ուղարկվեն՝ համաձայն կից հայտաձևի: Նույն անհատը/կազմակերպությունը կարող է ներկայացնել առավելագույնը մեկ հայտ:
- Հայտերը պետք է ներառեն ծրագրի/միջոցառման իրականացման նախահաշիվը էքսել տարբերակով, ծրագրի/միջոցառման բովանդակությունը՝ համաձայն ներկայացված հայտաձևի:
- Առաջարկվելիք ծրագիրը կարող է վերաբերել ինչպես հոբելյարներից մեկին, այնպես էլ մի քանիսին:
- Հայտերը պետք է ուղարկվեն mshakuyt.dramashnorh@yerevan.am և info@yerevan.am էլեկտրոնային հասցեներին՝ մինչև 2025թ. մարտի 31-ը ներառյալ (երևանյան ժամանակով մինչև 23:59-ը): Վերջնաժամկետից ուշ ուղարկված հայտերը չեն դիտարկվի: «Թեմա» հատվածում անհրաժեշտ է նշել՝ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐ:
- Մրցույթն անցկացվում է մեկ փուլով:
- Մրցույթին ներկայացված ծրագրերը նախկինում չպետք է իրականացված կամ այլ մրցույթին ներկայացված լինի:
- Սույն կանոնակարգով սահմանված պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են, որի մասին հայտատուին տրվում է ծանուցում՝ հայտը ներկայացնելուց հետո, 10-օրյա ժամկետում:
- Մասնակիցը մինչ հայտը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն իրավունք ունի փոխելու կամ հետ վերցնելու իր հայտը:

Հավելյալ տեղեկատվություն.

Մանրամասների համար զանգահարել 011514197 հեռախոսահամարին:

Գնահատման սանդղակ.

Գնահատման բաժիններ	Անբավարար՝ 0-2 միավոր	Բավարար՝ 3-5 միավոր	Լավ՝ 6-8 միավոր	Գերազանց՝ 9-10 միավոր
Ծրագրի/միջոցառման համապատասխանելիությունը խորագրին	Ներկայացվող առաջարկը չի համապատասխանում խորագրին կամ միայն մասնակի է առնչվում հոբելյարի և նրա ստեղծագործությունների հանրայնացմանը:	Մասնագիտական գնահատմամբ՝ խորագրի հետ կապը նկատվում է, սակայն առաջարկը զուտ հարմարեցված է խորագրին և ներկայացվող կապը արհեստական է:	Առաջարկը համապատասխանում է խորագրին և մասնագիտական գնահատմամբ՝ առաջարկը նախատեսված է կոնկրետ հայտի համար:	Խորագրի համար նախատեսված առաջարկը լիովին համապատասխանում է հոբելյարի և նրա ստեղծագործությունների հանրայնացման նպատակին:
Ծրագիրը/միջոցառումը նպաստում է մշակութային կյանքի ակտիվացմանը	Ներկայացվող առաջարկը միտված չէ կամ միայն մասամբ է միտված մշակութային կյանքի ակտիվացմանը:	Մանագիտական գնահատմամբ՝ առաջարկը որոշակիորեն կնպաստի մշակութային կյանքի աշխուժացմանը, սակայն դիմումատուն չի կարողացել իր հայտում պատշաճ կերպով ներկայացնել այս նպատակին ծառայելու հիմնավորումները:	Դիմումատուին հաջողվել է ներկայացնել առաջարկ, որտեղ բերված պնդումները բավական համոզիչ կերպով երաշխավորում են մշակութային կյանքի ակտիվացման հեռանկարները՝ թիրախավորելով շահառուներին և հիմնավորապես ներկայացնել շահառուների մոտավոր քանակը:	Դիմումատուի՝ մշակութային կյանքն ակտիվացնելու պնդումները հիմնված են փաստական տվյալների և վերլուծությունների վրա, թիրախային խմբերը հստակորեն գոյքագրված են, շահառուների մոտավոր քանակը ներկայացված է և նրանց ակտիվ մասնակցությունը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունենալու:

Ծրագիրը/միջոցառումը արդարացված է ծախս-արդյունք տեսանկյունից	Ներկայացված գնառաջարկը ընդհանրապես չի արդարացնում հատկացվող գումարի տրամադրումը՝ մշակութային կյանքն ակտիվացնելու և հոբելյարի կամ վերջինիս ստեղծագործությունների հանրայնացման արդյունքն ապահովելու տեսանկյունից:	Առաջարկը որոշակիորեն միտված է մշակութային կյանքն ակտիվացնելուն և հոբելյարի կամ վերջինիս ստեղծագործությունների հանրայնացմանն ուղղված նպատակների իրականացմանը, իսկ գնառաջարկի բաղադրիչները կամ ուռճացված են՝ համեմատ նմանօրինակ ծրագրերի/միջոցառումների կազմակերպմանը համադրելի գնառաջարկների, կամ համապատասխանում են մասնակի:	Առաջարկը միտված է մշակութային կյանքն ակտիվացնելուն և հոբելյարի կամ վերջինիս ստեղծագործությունների հանրայնացմանն ուղղված նպատակների իրականացմանը, սակայն գնառաջարկի բաղադրիչները զգալիորեն կամ ինչ-որ չափով ուռճացված են՝ համեմատ նմանօրինակ ծրագրերի/միջոցառումների կազմակերպման համար ներկայացված համադրելի գնառաջարկների:	Առաջարկը միտված է մշակութային կյանքն ակտիվացնելու և հոբելյարի կամ վերջինիս ստեղծագործությունների հանրայնացմանն ուղղված նպատակների իրականացմանը, և գնառաջարկի բաղադրիչները համապատասխանում են համադրելի ծրագրերի/միջոցառումների գնառաջարկներին կամ ավելի ցածր գին են առաջարկում:
Ծրագիրի/միջոցառման իրականացումը իրատեսական է	Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ ժամանակային և ֆինանսական միջոցները բավարար չեն լինի՝ հաշվի առնելով նմանօրինակ միջոցառումների/ծրագրերի մասով կուտակված փորձը և	Մասնագիտական գնահատականի համաձայն՝ առաջարկի իրագործումը ինչ-որ չափով իրատեսական է, սակայն իրականացման ընթացքում կարող են ծագել որոշակի խնդիրներ, դիմումատուն իր հերթին կա՛մ չի գիտակցում	Առաջարկը իրատեսական է, սակայն դրա իրականացման վերջնաժամկետի մասով կարող են ծագել որոշակի խնդիրներ, իսկ հատկացված գումարը կամ կարող է չբավականացնել կամ պատճառ դառնալ առաջարկի ոչ լիարժեք կատարման համար:	Առաջարկը իրատեսական է, դրա իրագործման ընթացքում հնարավոր խնդիրները գոյքագրված են և դրանք վերացնելու նպատակով ներկայացված փաստարկները հիմնավոր են: Առաջարկի՝ ճիշտ ժամանակին

	մասնագիտական կարծիքը:	դրանց մասին, կամ էլ նշել է, սակայն ոչ պատշաճ փաստարկներ է ներկայացրել խնդիրները լուծելու և առաջարկի իրականացումը ժամանակին և ֆինանսավորման ծավալին համապատասխան իրականացնելու համար:		իրականացվելու և ֆինանսավորման հետ կապված որևէ խնդրի չառաջացման հավանականությունը բավական մեծ է:
Ծրագիրը/միջոցառումը յուրօրինակ է	Առաջարկը ոչնչով չի տարբերվում կամ միայն մասամբ է առանձնանում ՀՀ-ում/Երևանում իրականացվող նմանատիպ ծրագրերից/միջոցառումներից: Այդքանով հանդերձ՝ այն չի իրականացվել հոբելյարի և նրա ստեղծագործությունների հանրայնացման համատեքստում:	Առաջարկը յուրօրինակ չէ, սակայն վերջին տարիներին նման ծրագիր/միջոցառում տեղի չի ունեցել ՀՀ-ում/Երևանում: Նմանատիպ ծրագրերը/միջոցառումները չեն իրականացվել հոբելյարի և նրա ստեղծագործությունների հանրայնացման համատեքստում:	Առաջարկը բավական յուրօրինակ է, երբևէ նման ծրագիր/միջոցառում չի իրականացվել ՀՀ-ում/Երևանում, որն ամբողջությամբ համահունչ է հայտի պահանջներին:	Առաջարկը յուրօրինակ է, որքանով հայտնի է գնահատողին՝ նման ծրագիր/միջոցառում աշխարհում երբևէ տեղի չի ունեցել: Այն լիովին համապատասխանում է հայտի պահանջներին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**